ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Ս/թ օգոստոսի 23-ին ՀՀ Սյունիքի մարզպետ Մելիքսեթ Պողոսյանը Տաթև համայնքում կատարել է քաղաքացիների ընդունելություն:

Ընդունելությանը ներկայացել է 11 քաղաքացի:

Դրամական օգնություն ստանալու խնդրանքով դիմել էր երեք, բնակարանով ապահովելու երկու, տանիքի վերանորոգման երկու, տղային եռամսյա զորահավաքից ազատելու միջնորդության, բնակարանի փոխհատուցման, անվադողերը սահման տեղափոխելու, հողի սեփականաշնորհման հարցերով՝ մեկական քաղաքացի:

Դրամական օգնության դիմումներից երկուսին տրվել է դրական լուծում, մեկը՝ մերժվել է:

Մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումներում մարզպետի հանձնարարությամբ ուսումնասիրվում են բնակարանով ապահովելու, տանիքի վերանորոգման , տղային եռամսյա զորահավաքից ազատելու, բնակարանի փոխհատուցման, անվադողերը սահման տեղափոխելու, հողի սեփականաշնորհման վերաբերյալ դիմումները: